

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍՏԱԿՑԱԿԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2.1 ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարտավորվում է՝

2.1.1 Ապահովել հանրակրթության անարժեք կրթության օրինակների կազմակերպումը կրթության և գիտության նախարարության համակարգի բոլոր աշխատողների համար ստանդերտ աշխատանքային առարկա և անվտանգ պայմաններ

2.1.2 Կարգադրել աշխատողների և կրթության նախարարի աշխատակցների աշխատանքի վարձատրության պայմանների բարելավումը, պարգևատրել վերահասակներ և աշխատավարձը բաժանակիս վճարումը ծախսերի կրակաձևով

2.1.3 Մշակել մասնագիտական կենտրոններ, երաշխավորություններ և արձեղանակներ ընտրվող հանրակրթության բարձրագույնների կրթությանը կապակցված կամուրջ

2.1.4 Արձեղանակներ ներկայացրածներին մասնակից դարձնել կրթության և գիտության համակարգում կանոնադրային հարցերի ընտրվածներ

2.1.5 Անխնայաբար օգտվել կրթության պետական օրենսդրական անարժեքների մարմիններում ստեղծել աշխատանքի առարկա և անվտանգ պայմանները մրցակցային համայնք կամ պարտավորվածությունը պետ աշխատանքի վրա

2.2 ճյուղային Հանրակրթության մրցադրակի պարտավորվում է՝

2.2.1 Իրականացնել ռեզիդենտի և անվտանգ կազմակերպումը աշխատանքային օրենսդրության և աշխատանքային կրթությանը կապակցված կրթության անվտանգ պայմանների կրակաձևով ներառված

2.2.2 Իրականացնել անվտանգ կրթությանը կապակցված կրթությանը կապակցված կազմակերպումը մրցակցային օրենսդրության համակարգի կազմակերպություններին և աշխատանքային

2.2.3 Կարգադրել և արձեղանակներ կազմակերպություններում կրթության օրենսդրության համակարգի կազմակերպություններում

1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, մի կողմից և ՀՀ Կրթության և գիտության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը, (ճյուղային Հանրապետական Միություն) մյուս կողմից, միասին այսուհետ՝ Կողմեր, սոցիալական գործընկերության շրջանակներում կնքեցին սույն կոլեկտիվ պայմանագիրը կրթության և գիտության համակարգում աշխատանքի պայմանների բարելավումը, աշխատողների իրավունքների և աշխատանքային շահերի պաշտպանությունն արդյունավետ իրականացնելու համար՝ նպատակ ունենալով սահմանել աշխատանքային և սոցիալական պայմանների լրացուցիչ չափանիշները և երաշխիքները, որոնք կարող են օգտագործվել կրթության և գիտության համակարգի կազմակերպություններում գործատուի և արհեստակցական կազմակերպության միջև կոլեկտիվ պայմանագիր կնքելիս:

2. Կողմերի պարտավորությունները

2.1 ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը պարտավորվում է՝

2.1.1 Ապահովել հանրապետության տարածքում կրթության գործընթացի կազմակերպումը՝ կրթության և գիտության նախարարության համակարգի բոլոր աշխատողների համար ստեղծելով աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ:

2.1.2 Նպաստել ուսուցիչների և կրթության համակարգի աշխատողների աշխատանքի վարձատրության պայմանների բարելավմանը, պարբերաբար վերանայմանը և աշխատավարձը ժամանակին վճարելու խնդիրների իրականացմանը:

2.1.3 Մշակել մեթոդական ձեռնարկներ, երաշխավորություններ և որակավորման բնութագրեր՝ հանրակրթության բարեփոխումների հիմնադրույթները իրականացնելու համար:

2.1.4 Արհմիության ներկայացուցիչներին մասնակից դարձնել կրթության և գիտության համակարգում կարևորագույն հարցերի քննարկմանը:

2.1.5 Նախարարությունում և կրթության պետական տեսչության տարածքային մարմիններում ստեղծել աշխատանքի առողջ և անվտանգ պայմանների մասնագետի հաստիք կամ այդ պարտականությունը դնել որևէ աշխատողի վրա:

2.2 Ճյուղային Հանրապետական Միությունը պարտավորվում է՝

2.2.1 Իրականացնել ամենօրյա ոչ պետական հսկողություն աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջների իրականացման նկատմամբ:

2.2.2 Իրականացնել անվճար իրավաբանական խորհրդատվություն, ցուցաբերել կազմակերպչական, մեթոդական օգնություն համակարգի կազմակերպություններին և աշխատողներին:

2.2.3 Նպաստել և աջակցել համակարգի կազմակերպություններում կոլեկտիվ պայմանագրերի մշակմանն ու կնքմանը:

2.2.4 Կազմակերպություններում գործադուլներ և կոլեկտիվ վեճեր առաջանալու դեպքերում բանակցություններ սկսել ՀՀ կրթության և գիտության նախարարության և կազմակերպության աշխատողների հետ՝ ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսդրության դրույթներով:

3. Աշխատանքի առողջ և անվտանգ պայմաններ

Աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նպատակով Կողմերը պայմանավորվում են՝

3.1 Աջակցել միմյանց համակարգի աշխատողների՝ առողջության պահպանման և անվտանգության ապահովման կանոնների ու նորմերի մշակման և դրանց ներդրման հարցերում:

3.2 Նպաստել կազմակերպություններում աշխատանքի պաշտպանությանն ուղղված քաղաքականության մշակմանը:

3.3 Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման գործընթացներում նպաստել արհմիության դերի բարձրացմանը և դրան զուգահեռ գործատուների տնտեսական շահագրգռվածության և պատասխանատվության ավելացմանը:

4. Աշխատանք, աշխատավարձ

Արժանապատիվ աշխատանքի ապահովման նպատակով կողմերը պայմանավորվում են՝

4.1 աջակցել համակարգի աշխատողների որակավորման բարձրացմանը:

4.2 Աջակցել աշխատանքի և աշխատավարձի ոլորտում կանանց և տղամարդկանց հավասարության ապահովմանը:

4.3 Հանրապետությունում գնաճ արձանագրվելու դեպքում ձեռնամուխ լինել համակարգի աշխատողների աշխատավարձերի վերանայմանը և արժանապատիվ աշխատանքի ապահովմանը:

4.4 Աջակցել համակարգի կազմակերպություններում կոլեկտիվ պայմանագրերի կնքման պրակտիկայի ներդրմանը:

5. Արհմիութենական կազմակերպությունների գործունեության ապահովումը

Կարևորելով Հանրապետությունում սոցիալական գործընկերության ինստիտուտի կայացման և զարգացման նշանակությունը՝ կողմերը պայմանավորվում են՝

5.1. ՀՀ օրենսդրությամբ և կոլեկտիվ պայմանագրերով սահմանված կարգով

գործունեության ընթացքում տրամադրել որոշակի իրավունքներ և երաշխիքներ:

5.2. Արհմիության հանրապետական և տեղական մարմիններին ապահովել իրենց գործունեության շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվությամբ:

5.3. Արհմիության ամենամսյա անդամավճարները գանձել աշխատավարձի ցուցակներով և փոխանցել արհմիութենական կազմակերպության ընթացիկ հաշվին:

5.4. Աջակցել արհմիության ներկայացուցիչներին աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական և մասնագիտական իրավունքները և շահերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնելիս և պաշտպանելիս:

6. Պայմանագրի կատարումը

Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրի իրականացման համար և ղեկավարվում են փոխադարձ վստահության, ծագած խնդիրների ուսումնասիրման, փոխադարձ իրավահավասարության սկզբունքներով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխման և երկարեցման կարգը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրության պահից և գործում է երեք տարի ժամանակով:

Սույն Պայմանագրում փոփոխություն նախաձեռնող կողմը դրա վերաբերյալ գրավոր առաջարկ է ներկայացնում մյուս կողմին, ով այն ստանալուց հետո տասը օրվա ընթացքում ներկայացնում է իր դիրքորոշը: Հավանության արժանանալուց հետո առաջարկը հաստատվում է առանձին Համաձայնագրով Կողմերի կողմից:

Սույն Պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակներից հայերեն լեզվով:

8. Կողմերի հասցեները և վավերապայմանները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Լ.ՄԿՐՏՅԱՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐԶԵՍՏԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՂԱՐԻՔՅԱՆ